

ՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ, տ.գ.դ., պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող

ԽՄԲԱԳՐԻ ԻՄ ԽՈՍՔԸ

Վերջին երկու տասնամյակների ընթացքում պարբերաբար անդրադարձել են արդի հայ տնտեսագիտական մտքի կացությանը, փորձել «տեսություն» կոչված ակնարկների ձևով ուրվագծել կատարվող տեղաշարժերը: Բնականաբար ժամանակի հոսքի մեջ փոխվել են նրանում կատարվող արծարծումների շրջանակները:

Մույն հոդվածը խմբագրի իմ խոսքն է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված Գ.Է. Հարությունյանի «ՀՀ արտաքին առևտրի հետագիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» (Ե., 2013) և Ս.Ա. Սկրտչյանի «Տնտեսական աճ. Կայուն զարգացում» (Ե., 2013) մենագրությունների վերաբերյալ:

1

Եվ նորից տնտեսական աճի մասին: Պոլ Հեյնեն նկատում է, թե «Չափազանց մեծ թվով մարդիկ «գիտեն», թե ինչպես պետք է լուծել հասարակության անհետաձգելի խնդիրները: Տնտեսագիտությունը նրանց պատկերացումն է որպես շատ պարզ կառուցված մի աշխարհ, որտեղ կարելի է շատ հեշտությամբ իրացնել մտադրությունները, իսկ լավ հասարակությունն ստեղծելու ճանապարհի միակ խոչընդոտը բարի մտադրությունների անբավարարությունն է: Բայց հասարակությունում իրականացնող ցանկացած գործողություն իր հետևից բերում է չնախատեսված և անկանխատեսելի հետևանքներ»¹: Տասնամյակներ առաջ թվում էր, թե որոշակիացված են տնտեսական աճի հետ կապված հարցերը, հստակեցված այն պայմանավորող գործոնների շրջանակները, որը բովանդակային հավասարություն էր գծում տնտեսական աճ-զարգացում հասկացությունների միջև: Մինչդեռ, ժամանակ առ ժամանակ խնդրի վերարծարծումները վկայում են չլուծված հանգույցների մասին հատկապես ապագա կտրվածքների առումներով:

Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը, բացի տարածական աճից, այլ պատկերացում չի մշակել, որը և դարձել է նրա կործանման պատճառը:

Անցյալ դարի 70-ական թվականներին ոչ առանց հիմքի մի հռոմեական «գլոբալ աղետ» էին կանխագուշակում հռոմեական ակումբի ներկայացուցիչները՝ կապված արդյունաբերության տեմպերով պայմանավորված հումքային ռեսուրսների ծավալների արագ աճի և աճող բնակչության աճող պահանջմունքների հետ: Դիպուկ արված այն դիտողությունը, թե «Աշխարհը բավականաչափ մեծ է՝ ցանկացած մարդու կարիքները բավարարելու համար, բայց չափազանց փոքր է, որ բավարարի մարդկային ագահությունը» (Մահաթմա Գանդի), կարծես անհրաժեշտություն է դարձել անցումը տնտեսության «գրոյական աճի» մոդելին: Ոչ իրատեսական այդ գաղափարին պիտի հաջորդեր տնտեսական աճի իրատեսական հայացքը, փորձելով տնտեսական առաջընթացը կառուցել «կայուն զարգացման» տեսության պոստուլատներին համապատասխան:

Ինչպես նկատում է Ս. Սկրտչյանը, գրականության մեջ կարելի է հանդիպել «կայուն զարգացման» շուրջ հարյուր տարբերակների, որոնք ի վերջո հանգում են ռեսուրսների արդի և ապագա ժամանակների օգտագործման որոշարկմանը: Բնորոշումների այդ նստվածքների մեջ էլ նա կայուն

¹ Պոլ Հեյնեն, Տնտեսական մտածելակերպ, Ե., 2008, էջ 675:

զարգացումը բնութագրում է որպես արդյունքների արդարացի բաշխմամբ շարունակական տնտեսական աճ՝ ռեսուրսների գումարային չմիավոր ներուժի և շրջակա միջավայրի որակի բարելավման պայմաններում:

Ս.Սկրտչյանի հետազոտության մեջ այն, ինչ ամենից շատ արժանի է ուշադրության, դա խնդրի առնչումն է հանրապետության տնտեսությանը, ավելի ստույգ որոշակիացնել լեռնամետալուրգիական արտադրության կայուն զարգացման էությունը, որը կարևորագույն նշանակություն ունենալով տնտեսական աճի գործոնների համակարգում և ցուցադրելով առաջանցիկ աճ ՀՆԱ-ի, հարկային մուտքերի և արտահանման մեջ, միաժամանակ շրջակա միջավայրի որակի վատթարացման մեջ ամենամեծ բացասական ազդեցություն ունեցող ճյուղն է: Հեղինակը հարցի նշված դրվածքում վկայակոչում է այն կողմնորոշումը, որը ցուցադրում է համաշխարհային փորձը, երբ բարեկեցության որոշակի մակարդակի հասնելուց հետո այդ բացասական ազդեցությունը սկսում է նվազել: Իսկ, քանի որ Հայաստանը, որպես զարգացող երկիր «դեռևս հեռու է էկոլոգիական բարելավման կետից, և տեխնածին աճը ուղեկցվում է շրջակա միջավայրի կազմալուծման պայմաններում», ուստի կարևորություն է ստացել «բարելավման կետի ցածր մակարդակի ապահովումը», այլապես ստիպված ենք լինելու զուգահեռ գծելու զարգացած երկրների այն օրինակները «երբ թվացող տնտեսական զարգացման գործընթացում երկիրը զրկվում է բնական ռեսուրսներից և կենսաբազմազանությունից»¹: Սոցիալական առաջընթացը վաղուց պարտադրում է այն տրամաբանությունը, թե օրակարգի հարց է դարձել տնտեսական աճի և առաջընթացի ցուցանիշների ճշգրտումը՝ այդ գործոնը մտցնելով սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների համակարգում: Հետևապես, ժամանակն է ինդիկատորների և ինդեքսների կիրառությամբ մշակել մի համընդհանուր ինտեգրալ ցուցանիշ, այն ընդունել որպես առաջընթացի իմացության ճիշտ մեկնակետ, որը, ինչպես նկատում է Ս.Սկրտչյանը, «կարող է լինել տնտեսական աճը և տնտեսական բարեկեցությունը բնութագրող ՀՆԱ-ի, ՀԱԱ-ի, ազգային եկամտի ցուցանիշների առավել տարողունակ համարժեքը»²: Ինչ խոսք, ազգային տնտեսությունների կտրվածքով դրանք կունենան չափումների անհամապատասխանություն, սակայն դա ոչ թե հակասություն է, այլ բովանդակային առումով համամարդկային անհրաժեշտություն:

Ս.Սկրտչյանն իրականացնում է ինտեգրալ ինդիկատորով ՀՀ տնտեսության և լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման վերլուծություն, համաձայն որի ոլորտը զարգանում է «պաշարների արագացված հյուծմամբ անկայուն աճով», որն ինքնին ի հայտ է բերում «կայունացնող տնտեսական քաղաքականության շարունակական գործընթացի իրականացման» անհրաժեշտությունը: Հրապարակվող շատ հոդվածներում առաջարկությունները հաճախ կրում են հանձնարարականների բնույթ: Կիրառելով տնտեսական աճի նեոդասական Դասգուպտա-Հիլ-Սոլոու-Ստիգլից թույլ կայունության մոդելը, Ս.Սկրտչյանը կոնկրետ նյութի փաստարկված վերլուծության արդյունքում գնահատել է ՀՀ տնտեսության պոտենցիալ կայունությունը և ստացել քանակական գնահատականներ, մտադրությոն ունենալով հատկապես մետաղական ռենտայի ներդրման և հարկային նոր մեխանիզմների կիրառման միջոցով այն դարձնելու պոտենցիալ գոյատևող և պոտենցիալ կայուն:

Իմ խորհուրդը Ս.Սկրտչյանին՝ շարունակել վերը նշված հարցերի վերլուծական խորացումները:

Փոխվել են մարդու, երկրների և բնության միջև փոխհարաբերության բանաձևերը, վերա-իմաստավորելով զարգացում ենթադրող կատեգորիաների ֆունկցիոնալ նշանակությունը, հաստատելով այն հայտնի իմաստությունը, թե աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է:

¹ Տե՛ս Ս.Ա.Սկրտչյան, Լեռնամետալուրգիական արդյունաբերությունը ՀՀ տնտեսական աճի հիմնահարցում (ատենախոսության սեղմագիր), Ե., 2013, էջ 11:

² Տե՛ս Ս.Սկրտչյանի թեկնածուական ատենախոսությունը, էջ 68:

Վերը նշված հարցերի առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գ.Հարությունյանի «ՀՀ արտաքին առևտրի հետազիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» (2013) մենագրությունը: «Անցման» շրջանի տնտեսագիտական միտքը բազմիցս անդրադարձել է արտաքին առևտրի խնդիրներին, առաջադրել լուծումներ, դրանք հիմնավորել համապատասխան փաստարկներով: Նշված աշխատությունը նպատակ ունի «Ընդհանրացնել նշված բոլոր մոտեցումները և համակարգել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի բարելավմանն առնչվող հիմնական տեսանկյունները՝ հեռանկարային զարգացման հնարավոր ուղիների բացահայտման նկատառումներով»¹: Իսկ, քանի որ տեղի են ունեցել համակարգային փոփոխություններ, պայմանավորելով մոր լուծումների հետ կապված դժվարությունները, ուստի հեղինակն իրավացիորեն դիտարկումներ է կատարում ելակետի՝ Հայաստանի խորհրդային շրջանի տնտեսական պատմության առանձնահատկությունների վերաբերյալ, ոչ թե համաձայնելով առանձին հեղինակների մոտ հանդիպվող նախորդ համակարգը միազիծ ժխտելու սահմանափակ հայեցողյանը, այլև փոխանցման գծի վրա դնելով այն, որ «Այնուամենայնիվ, Խորհրդային Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերում մասնագիտացման արդյունքում ձևավորվել են որոշակի արտադրական ավանդույթներ, և այս առումով, Հայաստանն այդ ոլորտներում, որոշակի առավելություններ ունի», հատկապես նկատի ունենալով «բարձրորակ մարդկային կապիտալը»²:

Համաշխարհային շուկան, որին սկսեց ինտեգրվել հանրապետությունը, առաջադրում էր մոր չափանիշներ: Հիմնական խնդիրներից է դառնում արտաքին շուկայում պահանջարկ ներկայացնող ապրանքների արտադրությունը, փոխում արտադրության ճյուղային և արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը: Գ.Հարությունյանը ճիշտ է կարդում անցման շրջանի տնտեսական պատմությունը, կատարում տրամաբանական դիտարկումներ: Սակայն, ավելի, քան երկու տասնամյակ անց, ազգային տնտեսության թուլությունը մնում են համագործակցության սահմանափակ ոլորտները՝ համաշխարհային շուկային ներկայանալով սակավաթիվ հումքային ռեսուրսներով, գյուղատնտեսական որոշ մթերքներով և էժան աշխատուժով, ինչը վտանգավոր է թե՛ տնտեսական անվտանգության, թե՛ երկրի արտադրական հզորությունների ոչ արդյունավետ օգտագործելու, և թե՛ երկրի ապագա բարօրության տեսանկյունից: Դրանցում, կարծես, իրացվում են աշխատության նպատակադրումը համեմատական առավելությունների տեսության դիտակետից բացահայտել հանրապետության տնտեսության զարգացման հնարավորություններն ու գտնել դրանց նպատակային օգտագործման ոլորտները: Իսկ դա այն տարողունակ տեսությունն է, որում, ըստ էության, բեկվում են ինչպես նախորդ, այնպես էլ հետագա տեսությունների բոլոր սկզբունքները: Այս իմաստով առաջինն անդրադարձ է կատարվում մերկանտիլիստների մասին գրականության մեջ տեղ գտած՝ «էժան գնել, թանկ վաճառել» պարզունակ ըմբռնմանը: Մինչդեռ Կ.Մարքսը հասուն մերկանտիլիզմը դիտում է «գիտության լուրջ ձեռքբերումներից», իսկ Ջ.Մ.Քեյնսը գտնում էր, որ մերկանտիլիզմի առաջադրույթն էր՝ մեծացնել փողի առաջարկը, նվազեցնել տոկոսադրույքը և խթանել ներդրումներն ու զբաղվածությունը: Իսկ նախորդ հարյուրամյակների ընթացքում զարգացած ու զարգացող երկրների տնտեսության կարգավորման միջոցառումների մեջ կարելի է կարդալ մերկանտիլիզմի պատմական փորձի իմաստությունը:

Տնտեսական կյանքի հետագա զարգացումը լայն հայացքի տակ է դնում ազգային հարստության ստեղծման վերաբերյալ ընկալումների շրջանակները, գտնել հարստության և միջազգային առևտրի միջև կապի հարաբերակցությունը՝ ծնունդ տալով ազատ առևտրի քաղաքականության դոկտրինային, սկզբում՝ Ա.Սմիթի բացարձակ առավելության, իսկ ավելի ուշ Դ.Ռիկարդոյի հարաբերական ծախսերի կամ հարաբերական առավելությունների տեսությանը: Վերջինիս նորոգության փորձերը սկսեցին շուրջ մեկ դար հետո՝ XX դարասկզբին, ի դեմս Հեքշեր Օհլինի տեսության, ըստ որի երկրների միջազգային մասնագիտացման հիմքում պետք է լինի արտադրության

¹ Գ.Հարությունյան, ՀՀ արտաքին առևտրի հետազիծը համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում, Ե., 2013, էջ 84:

² Նույն տեղում, էջ 187:

գործոններով ապահովվածության աստիճանը, այդ մոդելը ստուգաբանող Վ.Լեոնտևի պարադոքսի, Մ.Պոզների տեխնոլոգիական խզման տեսության, ապրանքի կենսացիկլի, Մ.Պորտերի երկրի մրցունակության որոշակի գործոնների համախմբի վրա կառուցված «ազգային մրցակցային առավելությունների» տեսությունը և այլն: Գ.Հարությունյանը նշված բոլոր տեսությունների համար իբրև սուբստանց դիտում է հարաբերական առավելությունների տեսությունը:

Աշխատության սույն բաժնի շարադրանքը կառուցված է տեսակետների տեսության, էքսկուրսների և վերլուծության սկզբունքների վրա, որն ամփոփվում է տնտեսական առավելությունների գնահատման հեղինակի այն հայեցության մեջ, որի հիմքում ուսումնասիրության պլյուրալիստական մեթոդն է, որը ենթադրում է երևույթների բազմատարբերակ գնահատման հիման վրա ձևավորված ինտեգրալ հայացք: Վերջինս էլ թույլ է տալիս հասնելու ինտեգրալ համեմատական առավելության «որպես արտաքին առևտրում այս կամ այն ապրանքի գծով երկրի տնտեսական առավելությունների ամբողջություն, որն ապահովում է մրցունակություն համաշխարհային շուկայում»: Աշխատության մեջ տրվում են այն յոթ գործոնների (աշխատուժ, արտադրության այլ գործոններ, համաշխարհային շուկայի պահանջարկ, այլընտրանքային ծախսեր, ապրանքի կենսացիկլի առանձնահատկություններ, գների մակարդակի փոխարժեք, ներքին շուկայի մրցունակություն և ինստիտուցիոնալ այլ պայմանների առկայություն) բնութագրիչներն ու առանձնահատկությունները, որոնց ազդեցությամբ ձևավորվում է երկրի ինտեգրալ համեմատական առավելությունը: Սակայն, Գ.Հարությունյանը գտնում է, որ վերջինիս գնահատման համար հաճախ օգտագործող Բ.Բուլասսայի «բացահայտված համեմատական առավելությունների» ինդեքսը ճշգրտման կարիք ունի: Ուշագրավ է հեղինակի նկատումը. «Ինդեքսը հնարավորություն է տալիս հետևել արտահանման դինամիկային և դրա վերլուծության արդյունքում կառուցել արտահանման հետագա բարելավման ճիշտ ռազմավարություն, բայց չի դիտարկում արտահանման կառուցվածքը պայմանավորող գործոնները, արտահանման պոտենցիալ ունեցող, բայց չարտահանվող ապրանքները, անտեսում է տնտեսական արդյունավետության հարցը: Այնինչ, արտահանման կառուցվածքի կատարելագործումը ենթադրում է պոտենցիալ համեմատական առավելությունների բացահայտում, վերակողմնորոշում ռեսուրս-ինտենսիվ ոլորտներից դեպի գիտատար, մեծ ավելացած արժեք պարունակող ապրանքների արտադրության ոլորտ»¹:

Վերը նշված գործոնների տեսանկյունից էլ հեղինակը իրականացնում է հանրապետության ճյուղերի ինտեգրալ համեմատական առավելությունների վերլուծությունը, փորձելով ոչ միայն նախանշել արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման հնարավոր ուղղություններն, այլ նաև բացահայտել արտադրական ոլորտում այդ առավելությունների դրսևորմանը խոչընդոտող հիմնական պատճառները²:

Հանրապետության տնտեսության ճյուղերի համեմատական առավելությունների առաջարկվող լուծումները, ինչպես ասում է հեղինակը, կարող են նաև «նվազ իրատեսական թվալ», բայց կարևորն այն է, որ աշխատությունը միտք է շարժում և հարցերի դրվածքով փորձ է հանրապետության տնտեսական տարածքը դարձնել համահունչ համեմատական առավելությունների սկզբունքներին:

Գ.Հարությունյանի նշված աշխատությունը հեղինակի ինքնահաստատման սկիզբն է: Նա դեռ ասելիք ունի:

¹ Գ.Հարությունյան, նշվ. աշխ., էջ 84:

² Նույն տեղում, էջ 187:

ԽՄԲԱԳՐԻ ԻՄ ԽՈՍԱԶԸ

ՌՈՔԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*

*ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
գլխավոր գիտաշխատող*

Համառոտագիր

Տնտեսական աճի և արտաքին առևտրի հարցերը մշտապես շարունակել են զբաղեցնել տնտեսագետներին: Եթե Ս.Մկրտչյանն առաջադրում է ինդիկատորների և ինդեքսների կիրառությամբ մի համընդհանուր ինտեգրալ ցուցանիշի մշակումը, որը կարող է լինել ՀՆԱ-ի, ՀԱԱ-ի, ազգային եկամտի ցուցանիշների առավել տարողունակ համարժեքը, ապա Գ. Հարությունյանն իրականացնելով հանրապետության ճյուղերի ինտեգրալ համեմատական առավելությունների վերլուծություն, փորձում է երկրի տնտեսական տարածքը դարձնել համահունչ վերը նշված սկզբունքներին:

Բանալի բառեր. *համեմատական առավելություններ, բազմաչափ համակարգ, ինտեգրալ հայացք, տնտեսական աճ, կայուն զարգացում:*

МОЕ СЛОВО РЕДАКТОРА

РОБЕРТ САРИНЯН, *д.э.н., профессор*

*главный научный сотрудник
Института экономики
им. М. Котаняна НАН РА*

Аннотация

Экономисты продолжают постоянно заниматься вопросами экономического роста экономики и внешней торговли. Если С.Мкртчян предлагает разработать единый интегральный показатель с применением индикаторов и индексов, который может быть наиболее всеобъемлющим эквивалентом показателей валового внутреннего продукта (ВВП), валового национального продукта (ВНП), национального дохода, то Г.Арутюнян на основе выполненного интегрального анализа сравнительных преимуществ отраслей республики пытается экономическое пространство страны сделать созвучным вышеуказанным принципам.

Ключевые слова: *сравнительные преимущества, многомерная система, интегральный взгляд, экономический рост, стабильное развитие.*

MY WORD OF EDITOR

ROBERT SARINYAN, *Doctor of Sciences (Economics)*

*Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

Issues on economic growth and foreign trade have been constantly of interest to economists. If Mkrtchyan, S., proposes design of a composite index that relies on indicators and indexes that could be broader equivalent to GDP, GNP, and national income, Harutyunyan, G., by analyzing integral comparative advantages of industries of the economy of the Republic attempts to make economic space in line with the above-stated principles.

Keywords: *comparative advantages, multidimensional system, integral approach, economic growth, sustainable development.*